

# „ՂԱՐԱԲԱՂ“

ԳՐԱԿԱՆ-ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թ Ե Ր Թ Ի

որ լսյա կտեսնի տուայժմ

## ՀԻՆԳՉԱՅԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ.

«ՂԱՐԱԲԱՂ»ի տարեկան բաժանորդագրին է Շուշում 3 ր.: կէս տարին 2 ր. Շուշուց դուրս տարեկան 4 ր., կէս տարին 2 ր. 50 կ., Արասաաճման 6 ր. կամ 16 ֆրանկ:  
Առանձին համարն արժէ 5 կոպ.

ԲՆԺՎԱՆԻ ԿԱՐ ՄԱՍՄԱՆ ԲՆԺՎԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ 26 ԸՆԴՈՒՆԵՆՈՐ

Հասցեն՝ Шуга, Редакция „Карабах“ Лорисмеликовская ул.—№ 24.  
կամ Schoucha (Caucase—Russie) Rédaction du journal „Karabagh“.

## Բ Ն Վ Ա Ն

«Ղարաբաղ»-ին բաժանորդագրել կարելի է Բ. Հ. Կ. Միւթեան գրասենեակում: Նոյն տեղում ընդունւում են նաև յայտարարութիւններ «Ղարաբաղ» թերթում գետեղելու համար

Շուշի, 22 յունարի

400 Ազգերի կեանքում ան-  
ԱՄԵՆԱԿԸ ցեալի փառաւոր յիշատակներ ոգևորութեան, անկեղծ ոգևորութեան դրդիչներ են հանդիսանում: Եւ որքան աշխարհի մեծ և զօրեղ ազգերը հարուստ են անցեալի այդպիսի յիշատակներով, նոյնքան էլ փոքր ազգերն ազգաս են այդպիսի գրգիշ-յիշատակներով: Սակայն փոքր ազգերի կեանքում նման յիշատակներն աւելի ցայտուն գրաւութիւն և աւելի աշքի ընկնող փայլունութիւն ունեն, որովհետև աշխարհակարախան երազներից հետո, յանձնւած զուտ քաղաքակրթական մտքերի, նրանք աւելի են փարւում այդպիսի յիշատակներին և համագրգային գործունեքին:

Սակաւ են փոքր ազգերի պատմական կեանքի յիշատակները, բայց աւելի սակաւ են հայ ազգի պարծանքի արժանի անցեալ յիշատակները: Լրանում է հայ տըպագրութեան չորս հարիւր ամեակը: Մի ժողովրդի կեանք է: Չորս հարիւր տարի: Ո՞վ գիտէ քանիքանի ազգեր ծնունդ առնելով կարո հարիւր տարի անգամ չեն կարողացել ապրել երկրագնդին վրայ և ձուլել ու չքացել են աշխարհից նոյնիսկ անյիշատակ ու անանուն:

Հարիւրաւոր տարիներ հայ ժողովուրդն ապրել է պատմական առանձնայատուկ պայմանների մէջ, ենթակայ բարձրադաս արմախրքների և սպրեւով հանդերձ ամենազգժարին հանգամանքների մէջ ստեղծել է գրականութիւն, լեզու, իւր գլուխներն ուղի է աւել այդ

գրականութեանը, լեզուն և ուղի չորս հարիւր տարի առաջ քաղաքակրթ ազգերի պարծանքի առարկայ ծառայող տպագրութիւնը փոխ անելով կարողացել է աւելի ևս կատարելագործել, ընդհանրացնել գրականութիւնը, մարդկային ծարաւ միաբար միշտ բաւարարող և միշտ նոր-նոր յատալխայացումներ պահանջող ու մտորող այդ մեծ գործօնը:

Տպագրութեան մեծութիւնն հասկանալու համար յիշենք վայրենի ազգերի մոլոր ու թափառիկ կեանքը, դարերով յետ գնանք հեթանոսական Հայաստանի խաւար մըթնոլորտը դիտելու, փոխադրւելը ոսկէ դարու օրերը և անանքայն դժբարութիւնները, որոնցով շրջանապատւած հայ լեզուի ունիւնեցանք արտապարտութիւնների միջոցով էին տարածում իրենց քաղաքակրթ ու լուսաւոր մտքերը, ներշնչւած կրօնական ոգով ու երկնային առաքինութեան պարզներով: Մտնենք արգիօք թորենացիների, Փարսեցիների, Շնորհայիների խցիղը դիտելու նրանց զօրեղային աշխատանքը, երբ մի ձեռագրից պատճէններ էին արտագրել տալիս ընդհանրացնելու իրենց մտքերը, իրենց քարոզներն ու պատգամները:

Բաւական է յիշել, որ տպագրութիւնը վերջ տաւ այդ բոլորին նաև մեր կեանքում, արտօնեալ զատակարգելի սեպականութիւնն հանգիստացող գրականութիւնը դարձրեց նաև միւս խաւերի ու գասակարգերի սեպականութիւն,

մատչելի դարձրեց նաև բոլոր գրականագէտներին:

Ո՞վ գիտէ, դուք ձեռագրներով սնուելու իրողութիւնը ի շարս այլ ազգերի մեզ և չքացրած լինէր այս աշխարհից, եթէ օգնութեան չհասնէր Գուտտենբերգեան հրաշալիքը, եթէ մի Ոսկան այդ գիւտար սեպականութիւնն չդարձնէր նաև հայ ժողովրդին:

Այսօր լրանում է այդ մեծ բարեբե չորս հարիւր ամեակը: հրապարակի մրտ ծառանում է մի մեծ ու նշանակալից յորեկեան: Եթէ հայ ժողովուրդը երբ և իցէ ցանկանայ իւր անցեալ յիշատակների միջից առաջնութիւններ ընտրել իրաւամբ տպագրութեան մուտքն է, որ տասերի դարի կողքին բազմելու է յաղթ ու վնաս պահն:

Այսօր է, որ հայ ժողովուրդը առանց գասի ու սեռի խտրութեան տօնելու է իւր անցեալի այս մեծ յիշատակը, այսօր է, որ հայութիւնը նշանակալից չորս հարիւր ամեակի առթիւ մի նոր յիշատակ է կանգնեցնելու իւր կուլտուրական կեանքի թանգարանում, այսօր է, որ մենք մեր անկեղծ գգաւնքով ու ոգևորութեամբ ծրնունը ենք տալու նոր կոթողների քաղաքակրթական նոր գործօնների:

Համազգային, համաժողովրդական տօն է այս տօնը, որի առաջ գրուելու խոնարհած օրհնանքներ ենք երգելու մեր սրբազան պապերին և անսոտաց աւանդ ենք թողնելու մեր յեանորդներին:

ՀԱՅ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵԹԷ մենք լու-  
ԳՐՈՑՆԵՐԸ կենք թեւ այն  
VI. մի շարք կարիք-  
ները, որոնց առաջ կանգնած է հայ միջնակարգ դպրոցը, այդ մեզ հետո կասնի: Բաւականաւոր մեր ասածներով և վերջացնենք մեր խօսքը հայ միջնակարգ դպրոցների մասին, ընդգծենք այն խոշոր պահանջը, որի առաջ կանգնած են բոլոր ազգային դպրոցները պետական օրէնքների համաձայն:

Հայ դպրոցը իր դիտական, քաղաքակրթական, կուլտուրական միսիայով դրւած է այնուամենայնայնայն արտօնութիւնն էրից, ինչ ունեն պետական միջնակարգ դպրոցները:

Հայ միջնակարգ դպրոցները Ռուսաստանում աշքի ընկնող արտօնութիւններ չեն վայելում: Հայ միջնակարգ դպրոցականի առաջ փակ են պետական աշքի ընկնող հաստատութիւնները, փակ են նաև բոլոր կրթական հաստատութիւնները ոչ միայն ուսուցանելու, այլ նաև ուսանելու համար: Տարրական դպրոցում պաշտօնավարելու